Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 707 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 332-Ա
որոշման

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖՈՒՏԲՈԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը նպաստելու և միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի, ՀՖՖ տեխնիկական կենտրոն-ակադեմիայի, Վանաձորի քաղաքային մարզադաշտի, Արմավիր «Հոբելյանական» մարզադաշտի, Վաղարշապատի ֆուտբոլի ակադեմիայի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում, ինչպես նաև ազգային հավաքականների համար բժշկական պարագաների, մարզագույքի, մարզահագուստի, սարքերի և սարքավորումների պարբերաբար ձեռքբերում և գույքի բազայի թարմացում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն – (UEFA - Շվեյցարիա, Նիոն), Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա – (FIFA – Շվեյցարիա, Ցյուրիխ), անհատ բարերարներ, ոչ առևտրային կազմակերպություններ:
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915)

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվում է՝ 1) Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտում (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Վարդանանց 65), 2) Վաղարշապատի ֆուտբոլի ակադեմիայում (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Վաղարշապատ, Մարգարա խճուղի թիվ 12). 3) Տեխնիկական կենտրոն-ակադեմիայում (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Աճառյան 35/31). 4) Վանաձորի քաղաքային մարզադաշտում (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Վանաձոր, Անդրանիկ փող. առաջին նրբանցք 20). 5) Արմավիրի «Հոբելյանական» մարզադաշտում (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Արմավիր, Հանրապետության 130): Բնագավառը՝ սպորտ:
6.	Ծրագրի բյուջեն	2,000,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Մարզադպրոցների սանները, մարզիկները և ֆուտբոլային ակումբները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի մայիսի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոց	Մարզադաշտերի արդիականացում, խաղադաշտերի խոտածածկերի փոխարինում կամ սեզոնային բարելավում, մարզադաշտերի լուսավորության տեղադրում կամ վերանորոգում, մարզադաշտերի վերակառուցում, շինարարական նյութերի, տեխնիկայի, լողավազանի ախտահանման միջոցների, հիգիենայի և անկողնային պարագաների, խոտի սերմի, պարարտանյութերի, քիմիկատների, ներքին հարդարման պարագաների, կահավորանքի, մարզագույքի, մարզահագուստի, մարզասարքերի, բժշկական պարագաների (ներառյալ դեղեր, դեղամիջոցներ), սարքավորումների, արհեստական խոտածածկի, արհեստական խոտածածկի տեղադրման պարագաների ներմուծում և ձեռքբերում՝ շուրջ 2,000,000,000 դրամ արժողությամբ՝ 2022 թվականի մայիսի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:

10.	Ձեռք բերվող կամ ներմուծվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ներմուծել կամ ձեռք բերել՝ 1) շինարարական նյութեր՝ 40,000,000 դրամ. 2) խաղադաշտերի մշակման ու խնամքի տեխնիկա և պահեստամասեր՝ 420,000,000 դրամ. 3) լողավազանի ախտահանման և խնամքի միջոցներ՝ 15,000,000 դրամ. 4) հիգիենայի և անկողնային պարագաներ՝ 15,000,000 դրամ. 5) խոտի սերմ և պարարտանյութեր՝ 350,000,000 դրամ. 6) ներքին հարդարման պարագաներ և կահավորանք՝ 40,000,000 դրամ. 7) մարզագույք/մարզահագուստ՝ 680,000,000 դրամ. 8) մարզասարքեր՝ 60,000,000 դրամ. 9) բժշկական պարագաներ (ներառյալ դեղեր, դեղամիջոցներ)՝ 30,000,000 դրամ. 10) սարքավորումներ՝ 250,000,000 դրամ. 11) արհեստական խոտածածկ և արհեստական խոտածածկի տեղադրման պարագաներ՝ 100,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

08.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ